Ն/Ի 3/1193-2022

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ 68

ք. Երևան « 02 » « 02 » 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վ. Գասպարյանի, մի կողմից, և **«Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն»** պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Խ. Հարությունյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված վճարի դիմաց Պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել Պայմանագրի 2.3-րդ կետով և իր կանոնադրությամբ նախատեսված պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական աշխատանքները և այլ գործառույթներ (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական աշխատանքների կանխատեսվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների՝ հավելված N 1,

1.1.2. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի՝ հավելված N 2,

1.1.3. առաջադրանքի՝ հավելված N 3,

1.1.4. ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվության՝ հավելված N 4:

1.2. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման դիմաց վճարումը կատարվում է դրամաշնորհի հատկացման ձևով՝ «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 9 հավելվածի N 9.13 աղյուսակի «1075. Մշակութային ժառանգության ծրագրի» «11001. Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական աշխատանքներ» միջոցառման համար նախատեսված բյուջետային հատկացումների սահմաններում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. 1. Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1. Սույն պայմանագրի պահանջներին համապատասխան՝ Կատարողից ընդունել պատշաճ ձևով ու կարգով կատարված աշխատանքները և հաշվետվությունները:

2.1.2. Իր և Կատարողի կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում Կատարողին ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն:

2.2. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից սույն պայմանագրի կատարման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս կանոնադրական գործունեությանը (բացառությամբ օրենքով և Կատարողի կանոնադրությամբ սահմանված դեպքերի):

2.2.2. Կատարողից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկույթ սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին:

2.2.3. Իր իրավասությունների սահմաններում կասեցնել Կատարողի կողմից ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարվող աշխատանքները:

2.2.4. Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները:

2.2.5. Վերահսկել սույն պայմանագրով Կատարողին հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը:

2.2.6. Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները վերանայել (փոփոխություն կատարել) նախորդ տարվա հաշվետվությունների արդյունքների հիման վրա:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. Ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքները, դրանց հաշվառումն ու գրանցումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով:

2.3.2. Ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով ապահովել սույն պայմանագրի N 3 հավելվածի առաջադրանքի՝ հուշարձանների պահպանական գոտիների լրամշակումը, կազմումը,

նախագծումը և թողարկումը (A3) ֆորմատի, հուշարձանների հաշվառումը, վկայագրերի լրամշակումը և կազմումը:

2.3.3. Ապահովել «Հուշարձան» տարեգրքի «ԺԷ» հատորի հրատարակումը:

2.3.4. Ապահովել հուշարձանների տարածքներում պեղման և հետախուզման աշխատանքների իրականացումը՝ համաձայն պայմանագրի N 3 հավելվածի առաջադրանքի:

2.3.5. Ապահովել հայկական պատմամշակութային ժառանգության գիտատեղեկատու շտեմարանի կազմումը, թվայնացումը:

2.3.6. Կազմել վտանգված, հրատապ կազմման կարիք ունեցող պատմամշակութային հուշարձանների գոտիները:

2.3.7. Ապահովել 5 հուշարձանի կադաստրի կազմում՝ համաձայն N 3 հավելվածի առաջադրանքում նշված ցուցակի:

2.3.8. Օրենքով սահմանված կարգով իրականցնել պայմանագրի N 3 հավելվածի առաջադրանքի 7-րդ մասով նախատեսված պեղման և ամրակայման աշխատանքները:

2.3.9. Սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել Պատվիրատուի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան:

2.3.10. Պատվիրատուին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտները անհապաղ վերացնելու համար:

2.3.11. Պատվիրատուի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի մասին, ինչպես նաև ներկայացնել սույն պայմանագրի կատարմանը վերաբերող ֆինանսական և բովանդակային հաշվետվությունը (ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կատարողի մոտ): Կատարողը պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար: Բովանդակային հաշվետվության հետ ներկայացնել իրականացված միջոցառումների մասին համապատասխան նյութեր (լուսանկարներ, լոգոտիպ կամ այլ գրաֆիկական պատկեր կամ ազդագրեր), հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով:

2.3.12. Պատվիրատուին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով:

2.3.13. Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցնել նրա իրավասությանը վերապահված հարցերի լուծման տարբերակները:

2.3.14. Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո Պատվիրատուի հաստատմանը ներկայացնել Կատարողի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը՝ համապատասխան հիմնավորումներով: Նախահաշվի յուրաքանչյուր ծախսային ուղղության մեջ կատարվող փոփոխությունը նախապես՝ մինչև փաստացի ծախսերի կատարումը համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Նախահաշվում փոփոխությունների ներկայացման առաջարկի վերջնաժամկետն է 2022 թվականի դեկտեմբերի 20-ը: Աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) ենթակա են վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2022 թվականի դեկտեմբերի 24-ը:

2.3.15. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Պայմանագրի պարտադիր պահանջները:

2.3.16. Հրապարակել Պատվիրատուի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին:

2.3.17. Սույն Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.4. Կատարողն իրավունք ունի՝

2.4.1. Պատվիրատուից պահանջել ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և Կատարողի կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված աշխատանքները:

2.4.2. Պատվիրատուից պահանջել վերացնել Կատարողի գործողություններից (անգործությունից) անկախ՝ Պատվիրատուի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները:

2.4.3. Վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների ընդհանուր արժեքը սահմանված է մինչև **97 677.2** հազար (իննսունյոթ միլիոն վեց հարյուր յոթանասունյոթ հազար երկու հարյուր) դրամ՝ ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները: Այդ գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարը Պատվիրատուն պետք է Կատարողին վճարի սույն պայմանագրի 2-րդ հավելվածով սահմանված ժամկետներում, Կատարողի՝ սույն պայմանագրում նշված գանձապետական հաշվեհամարին փոխանցումներ կատարելու եղանակով:

3.3. Կատարողի կողմից աշխատանքների կատարման՝ սույն պայմանագրով սահմանված ցուցանիշներն ու պայմանները խախտելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի վերանայել սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարի չափը և դրա վճարման ժամանակացույցը:

3.4. Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2022 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրության պահից և գործում է մինչև 2023 թվականի հունվարի 31-ը:

4.2. Սույն Պայմանագրի գործողությունը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կատարված աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը (հավելված N 4):

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ սույն պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու կամ կանխատեսվող եկամուտներից զրկելու համար կողմերից յուրաքանչյուրը կրում է պատասխանատվություն մյուս կողմին պատճառած վնասների և բաց թողնված օգուտների լրիվ ծավալով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ սույն պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների և բաց թողնված /չստացված/ եկամուտների լրիվ չափով փոխհատուցում:

6.3. Սույն պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը կողմերից որևէ մեկի համար այն կատարել շարունակելը աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում մյուս կողմն իրավունք ունի կամ ստանալ սույն պայմանագրի 6.1-ին ենթակետով նախատեսված լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել սույն պայմանագրի հարկադիր կատարումը:

6.4. Սույն պայմանագրով սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանվելու դեպքում վերջինս, եթե Պատվիրատուին չի ներկայացրել դրա վերաբերյալ հիմնավոր բացատրություն, վճարում է տույժ Պայմանագրի տվյալ ժամանակահատվածի համար սահ-

մանված գնի 0.05 (հինգ հարյուրերորդական) %-ի չափով՝ ուշացման յուրաքանչյուր օրացուցային օրվա համար:

6.5. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կատարողը, եթե Պատվիրատուին չի ներկայացրել դրա վերաբերյալ հիմնավոր բացատրություն, վճարում է տուգանք չկատարված աշխատանքի 0.5 (հինգ տասնորդական) %-ի չափով:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պատվիրատուն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է Պատվիրատուի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կատարողին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պատվիրատուն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կատարողից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների

աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

8.2. Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով՝ առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության:

8.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի երկկողմ գրավոր համաձայնություն կազմելու միջոցով:

8.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.5. Սույն պայմանագիրը կնքելիս կողմերը հաստատում են, որ դրանով իրենց շահերը և օրինական իրավունքները ոչ մի կերպ չեն խախտվում կամ սահմանափակվում:

8.6. Սույն պայմանագիրը կազմված է --41-- թերթից (ներառյալ հավելվածները), կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

9. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011032654
ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝

---------- Վ. Գասպարյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Փ. Բուզանդի փող. թիվ 1/3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001785
ՀՎՀՀ 02511444
Հեռ.՝ 010 52-66-18
Կատարողի ստորագրությունը

Տնօրեն

---------- Էմ. Հարությունյան

Կ.Տ.

Հավելված N 1

« 02 » « 02 » 2022 թ.

ՄՇԴ 68 պայմանագրի

2022 թվականին «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական աշխատանքների կանխատեսվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները

Ցուցանիշներ	Միավոր	Քանակ
Նախագծված և թողարկված հուշարձանների պահպանական գոտիներ, քանակ	հատ	160
Դասակարգված և ցուցակագրված հուշարձաններ, քանակը	հատ	70
Հաշվառվող, լրամշակվող և վկայագրվող հուշարձաններ, քանակը	հատ	90
Հուշարձանների կադաստրեր, թիվ	հատ	5
Հայկական պատմամշակութային ժառանգության գիտատեղեկատու շտեմարանում թվայնացված վավերագրեր, քանակը	հատ	390
Վտանգված և վերականգնվող պատմամշակութային անշարժ հուշարձանների պեղումներ, թիվ	հատ	5
«Հուշարձան» տարեգրքի հրատարակումներ, թիվ	հատ	1
Եկամուտներ, այդ թվում	հազար դրամ	97 750.2
- տրամադրվող դրամաշնորհը	հազար դրամ	**97 677.2**
- եկամուտներ մշակութային ծառայություններից *(այլ անձանց արխիվային նյութերի տրամադրումից)*	հազար դրամ	73.0
Ծախսերը	հազար դրամ	97 750.2

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011032654
ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
---------- Վ. Գասպարյան
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Փ. Բուզանդի փող. թիվ 1/3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001785
ՀՎՀՀ 02511444
Հեռ.՝ 010 52-66-18
Կատարողի ստորագրությունը
Տնօրեն՝
---------- Խ. Հարությունյան
Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
«02» «02» 2022 թ. N ՄՇԴ 68 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

զմակերպության անվանումը՝ «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ

ջետային ծախսերի գործառական դասակարգման՝

Ծրագիր 1075	Միջոցառում 11001	Պատմամաշակութային ժառանգության գիտահետազոտական աշխատանքներ												
Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեից, այդ թվում ըստ ամիսների /աճողական/												ԸՆԴԱՄԵՆԸ
		I եռամսյակ			I կիսամյակ			9 ամիս			տարի			
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային զմակերպություններին	4637	0.0	9622.0	**19243.9**	27287.8	35331.8	**43375.7**	51519.6	59663.6	**67807.5**	77764.1	87720.6	**97677.2**	**97677.2**
Ընդամենը		0.0	9622.0	**19243.9**	27287.8	35331.8	**43375.7**	51519.6	59663.6	**67807.5**	77764.1	87720.6	**97677.2**	**97677.2**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
ք. Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011032654
ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝
_____ Վ. Գասպարյան

ԿԱՏԱՐՈՂ՝
«Պատմամշակութային ժառանգության
գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Փ. Բուզանդի փող. թիվ 1/3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001785
ՀՎՀՀ 02511444
Հեռ.՝ 010 52-66-18
Կատարողի ստորագրությունը
Տնօրեն՝
_____ Խ. Հարությունյան
Կ.Տ.

Հավելված N 3
« 02 » « 02 » 2022 թ.
N 68 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

2022 թ. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրված դրամաշնորհով կատարվելիք աշխատանքների

Մաս I. Հուշարձանների պետական հաշվառում /հաշվառվող, լրամշակվող և վկայագրվող հուշարձաններ/ - 90 հուշարձան.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպա-նության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստա-տելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի պահանջները, ինչպես նաև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) չհայտնաբերված հուշարձանների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը՝ դրանց պահպանության վիճակի կամ կարգավիճակի փոփոխությունների տվյալները արդիականացնելու, ճշտելու և լրամշակելու նպատակով՝ անհրաժեշտ է.

1. **Կատարել ուսումնասիրություն երթուղային գիտարշավների միջոցով.**

Հուշարձանների պահպանության վիճակի վերաբերյալ տեղեկատվության ուսում-նասիրում, գիտական արշավախմբերի կազմակերպում և ՀՀ համայնքների տարածք-ներում բնապայման տեղազննության կատարում, հայտնաբերում, նախկինում կազմված արխիվային և գիտական հրատարակություններում առկա տվյալների հետ համեմատություն և դրանց պահպանության վիճակի փոփոխությունների գրանցում, ճշտում, փաստագրում.

2. **Վկայագրերի և վավերագրական փաստաթղթերի կազմում և լրամշակում.**

2022 թվականին, ըստ **1-ին կետի** արդյունքների և առկա արխիվային փաստաթղթերի վերլուծության՝ հուշարձանների վկայագրերի տվյալների ճշգրտում և լրամշակում, այդ թվում՝ ՀՀ տարածքում հայտնաբերված պատմամշակութային արժեք ներկայացնող, նոր օբյեկտների վկայագրերի կազմման աշխատանքներ.

• թվով **90** վկայագրի կազմման, տվյալների ճշտման և լրամշակման աշխատանքներ,

Աշխատանքներն իրականացնելու համար առաջնորդվել հետևյալ պահանջներով.

1) հուշարձանների վկայագրերի տվյալների ճշգրտման և լրամշակման, ինչպես նաև պատմամշակութային արժեք ներկայացնող նոր հայտնաբերված օբյեկտների վկայագրերի կազմման աշխատանքները կատարել Կարգի դրույթներին համապա-տասխան:

2) աշխատանքների նախնական փուլում ծանոթանալ առկա վկայագրերին (առավել վաղեմության սկզբունքով), փաստագրական նյութերին (գլխավոր հատակագծեր, հատակագծեր, չափագրություններ, գծանկարներ, լուսանկարներ և այլն), նոր հրատարակված մասնագիտական գրականությանը, գիտական շրջանառության մեջ գտնվող նյութերին, դրանցից քաղել անհրաժեշտ տվյալներ և օգտագործել աշխատանքում:

3) տեղում ուսումնասիրել հուշարձանները, գրանցել վկայագրմանը հաջորդող ժամանակահատվածում հուշարձանի կրած փոփոխությունները և փաստագրել դրանք:

4) տեղում կատարված ուսումնասիրությամբ ճշտել նոր հայտնաբերված օբյեկտի պատմամշակութային արժեքը, զբաղեցրած տարածքը և գրառել նկարագրական, տեղագրական, բնութագրական տվյալները, լուսանկարել, կատարել սխեմատիկ չափագրություններ, վկայականին կից վավերագրական նյութում նշել հուշարձանի զբաղեցրած ու իր հետ պատմականորեն և գործնական առումով կապված տարածքը և դրանց իրադրության վիճակը նշել WGS-84 կոորդինատային համակարգով 1:10000 մասշտաբի տեղահանույթի վրա:

5) կամերալ աշխատանքների ընթացքում լրամշակել դաշտային աշխատանքների, նոր հայտնաբերումների, հետազոտությունների նյութերը: Նախկինում կազմված վկայագրերում նյութերի լրամշակման հիման վրա կազմել առանձին ներդիրներ՝ նշելով դրանում բերված տվյալների աղբյուրները, հեղինակը, ժամանակը, լուսանկարները և սխեմատիկ չափագրությունները:

6) նոր հայտնաբերված օբյեկտների պետական հաշվառման փաստաթղթերը նախարարության փորձագիտական հանձնաժողովում քննարկման համար դրանց հետ միաժամանակ ներկայացնել հիմնավորված առաջարկություն՝ օբյեկտի պատմամշակութային արժեք ներկայացնելու, նորահայտ հուշարձանի կարգավիճակ տալու և դրա նշանակության վերաբերյալ:

7) դաշտային ուսումնասիրությունների հիման վրա կազմված կամ լրամշակված վկայագրերը և դրանց վավերագրական նյութերով բոլոր փաստաթղթերը և ներդիրները էլեկտրոնային 1 (մեկ) օրինակով ներկայացնել լիազոր մարմին (կցելով ուղեկցող գրությանը)՝ ծառայողական նպատակներով օգտագործման նպատակով:

Միաժամանակ, անհրաժեշտ է ուսումնասիրությունների ժամանակ՝ տվյալների ճշտման արդյունքում հայտնաբերված կամ պետական ցուցակներում ընգրկված, սակայն իրականում գոյություն չունեցող հուշարձանների վերաբերյալ նախարարություն ներկայացնել տեղեկատվություն՝ կցելով փաստագրական նյութերը:

3. Սույն մասի **2-րդ կետով** կազմված, լրամշակված վկայագրերի կամ հստակեցված փոփոխված տվյալներին համապատասխան՝ պետական ցուցակին համապատասխան ձևաչափով, ցուցակների կազմում (լրամշակում) ըստ վարչատարածքային միավորների և ներկայացում նախարարություն՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությամբ:

Մաս II. Հուշարձանների դասակարգում և ցուցակագրում - 70 հուշարձան.

1. Պետական հաշվառման աշխատանքների իրականացման շրջանակում հայտնաբերված պատմամշակութային արժեք ներկայացնող օբյեկտների դասակարգում ըստ տեսակի, բնույթի նշանակության և վարչատարածքային միավորների և ցուցակագրում:

2. Ցուցակների թղթային և էլեկտրոնային 1 (մեկ) տարբերակի ներկայացում նախարարություն:

Մաս III. Հայկական պատմամշակութային ժառանգության գիտատեղեկատու շտեմարանում վավերագրերի թվայնացում (390 հուշարձան).

Շտեմարանում վավերագրերի թվայնացման համար անհրաժեշտ է.

1. Պետական ցուցակներին համապատասխան յուրաքանչյուր հուշարձանի համար շտեմարանի թղթապանակների ստեղծում՝ ներառելով հուշարձանի տվյալներ:

2. Թղթապանակներում հուշարձանի տվյալների դասակարգում՝

1) հուշարձանի տեսակի, բնույթի, նշանակության,

2) հուշարձանի պահպանության և օգտագործման ներկա վիճակի,

3) վկայագրի,

4) գրականությունը, արխիվային աղբյուրները, նկարագիրը,

5) վավերագրերի (հանույթներ, չափագրություններ, լուսանկարներ, այդ թվում՝ արխիվային և գիտական հրատարակություններում առկա նյութեր),

6) պահպանական գոտիներ և պայմանակարգեր:

3. Սույն մասի 1-ին և 2-րդ կետերի տվյալների ներմուծում համակարգիչ, մշակում, խմբագրում և սրբագրում:

4. 2022 թ. ընթացքում կազմված գիտատեղեկատու շտեմարանի թվայնացված թղթապանակների (վավերագրերի) ցուցակը հանձնել լիազոր մարմնին:

Մաս IV. Հուշարձանների պահպանական գոտիների նախագծում (այդ թվում՝ լրամշակում) և թողարկում (160 հուշարձան).

1. իրականացնել պահպանական գոտիների համակարգի նախագծում և դրանց օգտագործման պայմանակարգերի կազմում (այդ թվում՝ լրամշակում).

1) թվով 140 հուշարձանի պահպանական գոտիների նախագծերի կազմում և թողարկում.

2) թվով 20 հուշարձանի պահպանական գոտիների նախագծերի կազմումը նախատեսվում է հուշարձանների պատմական միջավայրի վտանգման՝ հրատապ անհրաժեշտության դեպքերում, որոնց տվյալները կտրամադրվեն ընթացիկ տարում,

2. 1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար առաջադրվող պահանջները.

1) աշխատանքների նախնական փուլում ծանոթանալ ցանկում ընդգրկված հուշարձանների վկայագրերի և կից քարտեզագրական նյութերի հետ՝ պարզելով դրանց բնույթին վերաբերող տվյալները, լուսանկարները, չափագրությունները, առկա տեղահանույթները 1:500-ից մինչև 1:25000 մասշտաբով, դրանց բացակայության ժամանակ՝ օգտվել այլ արխիվներից և ֆոնդերից, դուրս գրել պահպանական միավոր հուշարձանի մեջ մտնող բոլոր հուշարձանների մասին եղած տեղեկությունը՝ այն առումով, որ դաշտային և կամերալ աշխատանքների ընթացքում ճշտգրվեն, լրացվեն անորոշություններն ու բացթողումները,

2) առկա հանույթի վրա նշել հուշարձանի տարածքը (հուշարձանի անմիջական ազդեցության հողատարածք) և առանձին պահպանական միավորի մեջ մտնող բոլոր հուշարձանների (բացի փոքր ձևերից) զբաղեցրած տարածքները՝ WGS-84 համակարգով թվայնացնել դրանց տարածքի և պահպանական գոտիների սահմանագծերի բեկյալների գագաթները (անկյունները): Հուշարձանի տարածքում նշել դրա տեղադիրքը (ըստ կառույցի կամ կոթողի) տարածքի սահմանների նկատմամբ: Սահմանագծերը նշել՝

ա) հուշարձանի զբաղեցրած տարածքը՝ հոծ գծով,

բ) հուշարձանի պահպանության գոտին՝ հուշարձանի պատմական միջավայրի անմիջական ազդեցության և հնարավոր հնագիտական շերտերի որոշակի պահպանության պայմանակարգով (ռեժիմ) կանոնակարգվող տարածքը, հոծ գծիկներով,

գ) կառուցապատման կարգավորման գոտին՝ հուշարձանի պատմական միջավայրի առկա կառուցապատման սկզբունքների և քաղաքաշինական կերպարի պահպանման, ներդաշնակ զարգացման և բարենպաստ տեսողական ընկալման պայմանակարգով (ռեժիմ) կանոնակարգվող տարածքը՝ կետ գծիկներով (ըստ անհրաժեշտության),

դ) լանդշաֆտի պահպանման գոտին՝ հուշարձանի պատմական միջավայրի բնական կամ պատմականորեն ձևավորված ռելիեֆի, ջրային մակերեսների և բուսականության պահպանության ռեժիմի պահպանության ապահովման նպատակով սահմանված տարածքը՝ կետերով (ըստ անհրաժեշտության):

3) հուշարձանների պահպանական գոտիների սահմանների կազմման ժամանակ առաջնորդվել դրանցից յուրաքանչյուրով կարգավորման ենթակա անհրաժեշտություններով և պատմական միջավայրի անխաթարությունն ապահովելու պահանջով: Նախատեսվող գոտիների սահմանները նախագծելիս հաշվի առնել դրանց օգտագործման պայմանակարգերով կարգավորվող դրույթները (նշելով պայմանակարգում): Յուրաքանչյուր գոտու պայմանակարգ պետք է նախատեսի հնարավոր թույլատրելի և անթույլատրելի (սահմանափակող) օգտագործման և/կամ կառուցապատման պայմաներ (դրույթներ):

4) եթե առկա են այնպիսի հուշարձաններ, որոնց գոտիները, ըստ տեղադրության, հնարավոր է կազմել ընդհանուր մեկ պահպանական միավորի մեջ, ապա անհրաժեշտ է պահպանական գոտու համակարգում գտնվող հուշարձանների զբաղեցրած տարածքները ևս նշել հոծ գծերով՝ իրենց համապատասխան անվանումներով:

5) պահպանական գոտիների **նկարագրական-բնութարական տեղեկանքում** առավել ընդարձակ ներկայացնել պահպանական գոտիների, դրանց սահմանների նկարագիրը և դրանց ընտրության հիմնավորումները:

3. Կամերալ աշխատանքներ.

1) Դաշտային աշխատանքների արդյունքները մշակել համաձայն Կարգի՝ ապահովելով համակարգչային թողարկման համար անհրաժեշտ առավելագույն պայմանները:

2) Այդ նպատակով համադրել գեոդեզիական հանույթների առկա տվյալները և նախարարության կողմից ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից ձեռք բերված PDF ձևաչափով, WGS-84 համակարգով կազմված (PDF ձևաչափով) քարտեզագրական նյութերը՝ թվայնացված տվյալներն արտահայտելով հանույթների վրա:

3) Ուսումնասիրության արդյունքները մշակել և ներառել համակարգիչ՝ համաձայն ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի թիվ 438 որոշմամբ հաստատված Կարգի N 3 ձևի՝

նախատեսելով պահպանական գոտիների նախագծի յուրաքանչյուր առանձին գոտու պայմանակարգը՝ տեքստային առանձին ձևակերպմամբ: Հուշարձանի զբաղեցրած տարածքի շուրջը սահմանվող պահպանական գոտիների նախագծում նշել հուշարձանի համառոտ բնութագիրը, հուշարձանի զբաղեցրած տարածքը, պահպանական գոտիների սահմանները, դրանց որոշման հենակետերը, մոտենալու ուղիները: Թողարկված նախագծի վրա հուշարձանի պահպանական միավորի անվան հետ (փակագծում) նշել նաև հուշարձանի պետական ցուցիչի համարը՝ հստակեցնելու համար հուշարձանի առկայությունը պետական ցուցակում:

4. Պահպանական գոտիների նախագծերի թողարկումը.

1) թողարկել 6 թղթային և 1 էլեկտրոնային օրինակով,

2) թողարկված նախագծերի 1-ական թղթային և էլեկտրոնային օրինակները (գոտու հատակագիծը՝ DWG ձևաչափով)՝ ուղեկցող գրությամբ ներկայացնել նախարարություն, որոնց վերաբերյալ դրական եզրակացություն ստանալուց հետո՝ մնացյալ 5-ական օրինակը ներկայացնել պետական լիազոր մարմնին, իսկ բացասական եզրակացության դեպքում՝ ուղղել անճշտությունները և լրամշակված նախագիծը կրկին ներկայացնել նախարարություն:

5. Հուշարձանների պահպանական գոտիների նախագծերի թողարկումները նախարարություն ներկայացնել մինչև 2023 թ. հունվարի 20-ը:

